"Սյունիքի Մարզային Նյարդահոգեբուժական Դիսպանսեր" ՓԲԸ
RA "Syuniki Marzain Nyardahogebujakan Dispanser" CJSC
РА ЗАО "Сюники Марзаин Нярдаогебужакан Диспансер"

ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Բաղաբերդ 48, 3307
Str. Baghaberd 48, Kapan, Armenia, 3307
Республика Армения, г. Капан, ул. Багаберд 48, 3307
e-mail: srpndisp@mail.ru skype: syunikpsychdisp

(Ֆ) +374 285 5-37-12, 5-44-45, +374 91 20-83-25
(F) +374 285 5-37-12, 5-44-45, +374 91 20-83-25
(Ф) +374 285 5-37-12, 5-44-45, +374 91 20-83-25
www.syunikpsychdisp.am

Հ/Հ 160224578015
'ՎՏԲ-Հայաստան Բանկ' ՓԲԸ
'Կապան' մասնաճյուղ
ՀՎՀՀ 09407988

N 609 28.08.2023թ

**ԼԵՈ Ա ՍՊԸ-ի Տնօրեն**
**Լ. Աղաբեկյանի**

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Սյունիքի մարզի նյարդահոգեբուժական դիսպանսեր ՓԲԸ-ի / այսուհետ՝ պատվիրատու/ և ԼԵՈ Ա ՍՊԸ-ի /այսուհետ ՝ մատակարար/ միջև կնքված «ՍՄՆՀԴ-ԳՀԱՊՁԲ-23/1-12» և «ՍՄՆՀԴ-ԳՀԱՊՁԲ-23/1-1-40» ծածկագրերով գնման պայմանագրի /այսուհետ՝ պայմանագիր/ 1,1 կետով սահմանված կարգով Լեո Ա ՍՊԸ-ն պարտավոր էր կատարել ստանձնած պարտավորությունները: 23,08,2023թ-ի գրությամբ ԼԵՈ Ա ՍՊԸ-ն հրաժարվում է կատարել պարտավորություններն և հրաժարվում է պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարելուց:

Համաձայն Պայմանագրի 2,1,7-րդ կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.և 8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ԼԵՈ Ա ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 /հինգ/ բանկային օրվա ընթացքում, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները /տուժանքի համաձայանգրերը՝ հավելված N4,1 և հավելված N5,1/:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի . որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց» ենթակետի պահանջները, խնդրում ենք Ձեզ ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՍՄՆՀԴ ՓԲԸ տնօրենի ժ/պ Ա. Մարտիրոսյան

Կատարող Ռ. Մկրտումյան
Հեռ. (098) 984525